


2nd ed. (19) 4

UNIVERSITY MICROFILMS



ՊՐԻՆՏԱՐՆԵՐ ԲՈՂՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՅԵՔ

31 JAN 2018

ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ
ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ
(ԲՈՂՇԵՎԻԿՆԵՐԻ)
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻ
ՍԵԿՑԻԱ



(Ընդունված է միաձայն Համկ(ր)Կ XVIII
համագումարի կողմից)

Գ Ե Մ Ի Ր Ա Ն
Դժգոհական գրականության հրատարակչություն
Յերեվան — 1939



1-37179r

УСТАВ ВСЕСОЮЗНОЙ
КОММУНИСТИЧЕСКОЙ ПАРТИИ
(БОЛЬШЕВИКОВ)

СЕКЦИЯ КОММУНИСТИЧЕСКОГО
ИНТЕРНАЦИОНАЛА

Армгиз—Издательство полит. литературы
Ереван, 1939

Համամիութենական Կոմունիստական (բոլշևիկներին) կուսակցությունը, վորը հանդիսանում է Կոմունիստական ինտերնացիոնալի սեկցիան, ԽՍՀ Միության բանվոր դասակարգի առաջավոր, կազմակերպված ջոկատն է, նրա դասակարգային կազմակերպության բարձրագույն ձևը: Կուսակցությունն իր աշխատանքում ղեկավարվում է մարքսիզմ-լենինիզմի թեորիայով:

Կուսակցությունն իրականացնում է բանվոր դասակարգին, դյուղացիու-



1-37/79p

УСТАВ ВСЕСОЮЗНОЙ
КОММУНИСТИЧЕСКОЙ ПАРТИИ
(БОЛЬШЕВИКОВ)

СЕКЦИЯ КОММУНИСТИЧЕСКОГО
ИНТЕРНАЦИОНАЛА

Армгиз—Издательство полит. литературы
Ереван, 1939

Համամիութենական Կոմունիստական (բոլշևիկներին) կուսակցությունը, Վորը Հանդիսանում է Կոմունիստական ինտերնացիոնալի սեկցիան, ԽՍՀ Միության բանվոր դասակարգի առաջավոր, կազմակերպված ջոկատն է, նրա դասակարգային կազմակերպության բարձրագույն ձևը: Կուսակցությունն իր աշխատանքում ղեկավարվում է մարքսիզմ-լենինիզմի թեորիայով:

Կուսակցությունն իրականացնում է բանվոր դասակարգին, դյուղացիու-

թյանն, ինտելիգենցիային, —ամբողջ
խորհրդային ժողովրդին ղեկավարե-
լու գործը բանվոր դասակարգի գլի-
տատուերայի ամրապնդման համար,
սոցիալիստական կարգի ամրապնդ-
ման ու զարգացման համար, կոմու-
նիզմի հաղթանակի համար մղվող
պայքարում:

Կուսակցությունը հանդիսանում է
աշխատավորների բոլոր, ինչպես հա-
սարակական, այնպես և պետական
կազմակերպությունների ղեկավարող
կորիզը և ապահովում է կոմունիստա-
կան հասարակության հաջող կառու-
ցումը:

Կուսակցությունը հանդիսանում է
միասնական մարտական մի կազմա-
կերպություն, չադկապված գիտակ-
ցական կարգապահությամբ, վորը

հավասարապես պարտադիր է կուսակ-
ցության բոլոր անդամների համար:
Կուսակցությունն ուժեղ է իր հա-
մախմբվածությամբ, կամքի միաս-
նությամբ, գործողությունների միաս-
նությամբ, վորոնք անհամատեղելի
յեն ծրագրից ու կանոնադրությունից
չեզոքելու, կուսակցական կարգապա-
հությունը խախտելու, Փրակցիոն
խմբավորումների, յերկերեսանիու-
թյան հետ: Կուսակցությունն իր շար-
քերը մաքրում է այն անձերից, վո-
րոնք խախտում են կուսակցության
ծրագրերը, կուսակցության կանոնա-
դրությունը, կուսակցության կարգա-
պահությունը:

Կուսակցությունն իր անդամներից
պահանջում է ակտիվ ու, անձնվեր
աշխատանք՝ կուսակցության ծրա-

գիրն ու կանոնադրությունն իրակա-
նացնելու, կուսակցության և նրա որ-
դանների բոլոր վորոշումները կատա-
րելու, կուսակցության շարքերի մի-
ասնությունն ապահովելու և ինչպես
ԽՍՀՄ ազգությունների աշխատավոր-
ների միջև, այնպես եւ աշխարհի բո-
լոր յերկրների պրոլետարների հետ
յեղբայրական, ինտերնացիոնալ հա-
րաբերություններն ամրապնդելու ուղ-
ղությամբ:

I

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԸ,
ՆՐԱՆՑ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ
ՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

1. Կուսակցության անդամ եւ հա-
մարվում ամեն վոք, ով ընդունում եւ
կուսակցության ծրագիրը, աշխատում

եւ նրա կադմակերպություններից մեկի
մեջ, յենթարկվում եւ կուսակցության
վորոշումներին և մուծում եւ անդա-
մալճար:

2. Կուսակցության անդամը պար-
տավոր եւ.

ա) անդուլ աշխատել իր գիտակցա-
կանությունը բարձրացնելու վրա,
մարքսիզմ-լենինիզմի հիմունքները
յուրացնելու վրա.

բ) խստադույն կերպով պահպանել
կուսակցական կարգապահությունը,
ակտիվ կերպով մասնակցել կուսակ-
ցության և յերկրի քաղաքական կյան-
քին, պրակտիկայում կիրառել կու-
սակցության քաղաքականությունը և
կուսակցական որդանների վորոշում-
ները.

գ) լինել աշխատանքային և պետա-

կան կարգապահութեան պահպանման
որինակ, տէրապետել իր գործի տեխ-
նիկային, անընդհատ բարձրացնելով
իր արտադրական, գործնական վորա-
կավորումը.

դ) որը-որին ամրապնդել կապը
մասսաների հետ, ժամանակին արձա-
ղանդել աշխատավորների հարցումնե-
րին ու կարիքներին, պարզաբանել
անկուսակցական մասսաներին կու-
սակցութեան քաղաքականութեան ու
վորոշումների իմաստը:

3. Կուսակցութեան անդամն իրա-
վունք ունի.

ա) մասնակցելու կուսակցական քա-
ղաքականութեան պրակտիկ հարցերի
ազատ ու գործարար քննարկմանը
կուսակցական ժողովներում կամ կու-
սակցական մամուլում.

բ) կուսակցական ժողովներում
քննադատելու կուսակցութեան ամեն
մի աշխատողի.

գ) ընտրելու և ընտրվելու կուսակ-
ցական որդաններում.

դ) պահանջելու անձնական մաս-
նակցութուն այն բոլոր դեպքերում,
յերբ վորոշում է կայացվում նրա
գործունեութեան կամ վարքի մասին.

յե) ամեն մի հարցով ու հայտարա-
րութեամբ ղեմելու կուսակցական ա-
մեն մի ինստանցիա, ընդհուպ մինչև
ՀամԿ(բ)Կ Կենտկոմ:

4. Կուսակցութեան անդամ ընդու-
նելը կատարվում է բացառապես ան-
հատական կարգով: Նոր անդամներ
ընդունվում են այն թեկնածուների
թվից, վորոնք անցել են սահմանված
թեկնածուական ստաժը: Կուսակցու-

թյան անդամ ընդունվում են գիտակից, ազատիվ և կոմունիզմի գործին նվիրված բանվորները, գյուղացիներն ու ինտելիգենտները:

Կուսակցության մեջ ընդունվում են 18 տարեկան հասակին հասած անձերը:

Թեկնածուներից կուսակցության անդամ ընդունելու կարգը.

ա) Կուսակցության անդամ ընդունվողները ներկայացնում են կուսակցության յերեք անդամների յերաշխափորություն, վորոնք ունեն առնվազն յերեք տարվա կուսակցական ստաժ և ճանաչում են նրանց վոչ պակաս քան մեկ տարվա համատեղ աշխատանքից:

Ծանոթություն առաջին.— Կոմսոմոլից կուսակցության անդամ

ընդունելիս ՀամԼԿՅԵՄ շրջանային կոմիտեյի յերաշխափորությունը հավասարեցվում է կուսակցության մեկ անդամի յերաշխափորության:

Ծանոթություն յերկրորդ.— ՀամԿ(բ)Կ Կենտկոմի անդամները և անդամության թեկնածուները յերաշխափորությունից ձեռնպահ են մնում:

բ) Կուսակցության մեջ ընդունելու հարցը քննվում և վճռվում է սկզբնական կուսակցական կազմակերպության ընդհանուր ժողովի կողմից, վորի վորոշումն ուժի մեջ է մտնում շրջկոմի, իսկ այն քաղաքներում, վորտեղ չկա ռայոնական բաժանում,— կուսակցության քաղկոմի հաստատումից հետո:

Կուսակցության մեջ ընդունելու հարցը քննելիս յերաշխափորոշների ներկայությունը պարտադիր չէ:

դ) Յերիտասարդությունը, մինչև 20 տարեկանը ներառյալ, կուսակցության մեջ ընդունվում է միայն Համ. ԼԿՅԵՄ-ի միջոցով:

դ) Այլ կուսակցություններից յեւլածները կուսակցության անդամ ընդունվում են բացառիկ դեպքերում և կուսակցության հինգ անդամների յերաշխափորությամբ, վորոնցից յերեքը՝ տաս տարվա կուսակցական ստաժով և յերկուսը՝ մինչհեղափոխական կուսստաժով, — վրչ այլ կերպ, քան սկզբնական կուսակազմակերպության միջոցով, անսլայժման ՀամԿ(բ)Կ Կենտկոմի հաստատումով:

5. Յերաշխափորոշները պատասխա-

նատվություն են կրում իրենց յերաշխափորությունների լափորակության համար:

6. Թեկնածուներից կուսակցության անդամ ընդունվողների կուսստաժը հաշվվում է այն որից, յերբ համապատասխան սկզբնական կուսակցական կազմակերպության ընդհանուր ժողովը վորոշում է ընդունում տվյալ ընկերոջը կուսակցության անդամ հաստատելու մասին:

7. Մի կազմակերպության ամեն մի անդամ մի ուրիշ կազմակերպության աշխատանքի շրջանը փոխադրվելու դեպքում վերջինիս կողմից մտցվում է իր անդամների թվի մեջ:

Ծանոթություն. — Կուսակցության անդամների՝ մի կազմակերպությունից մյուսը փոխա-

դրվելը կատարվում է ՀամԿ(բ)Կ
Կենտկոմի կողմից սահմանված
կանոնների համաձայն:

8. Կուսակցության այն անդամներն
ու թեկնածուները, վորոնք յերեք ամս-
սըվա ընթացքում առանց հարգելի
պատճառների չեն վճարել անդամա-
վճարները, համարվում են կուսակ-
ցությունից դուրս մնացած, վորի մա-
սին սկզբնական կուսակցական կազ-
մակերպությունն ընդունում է համա-
պատասխան վորոշում, վորը հաս-
տատվում է կուսակցության շրջկոմի
կամ քաղկոմի կողմից:

9. Վորևե մեկին կուսակցությունից
վտարելու հարցը վորոշում է այն
սկզբնական կուսակցական կազմակեր-
պության ընդհանուր ժողովը, վորի
անդամն է հանդիսանում վտարվողը,

և հաստատվում է կուսակցության
շրջկոմի կամ քաղկոմի կողմից: Կու-
սակցությունից վտարելու մասին շրջ-
կոմի կամ քաղկոմի վորոշումն ուժ է
ստանում միայն այն դեպքում, յեթե
այն հաստատված է կուսակցության
մարզկոմի, յերկրկոմի կամ Միութե-
նական հանրապետության կոմկու-
սակցության Կենտկոմի կողմից:

10. Մինչև կուսակցությունից վտա-
րելու վերաբերյալ վորոշումը մարզ-
կոմի, յերկրկոմի կամ Միութենական
հանրապետության կոմկուսակցու-
թյան Կենտկոմի կողմից հաստատվե-
լը, կուսակցական տոմսը մնում է
կուսակցության անդամի ձեռքին, և
նա իրավունք ունի հաճախելու կու-
սակցական կոնֆերանսներին:

Կուսակցության վտարված անդամ-

ների մասին մարդկոմը, յերկրկոմը,
Միութենական հանրապետության
կոմկուսակցության Կենտկոմը հրա-
պարակում և տեղական կուսակցական
մամուլում՝ մատնանշելով վտարման
պատճառները, ինչպես նաև հրապա-
րակում և սխալ կերպով վտարվածնե-
րին վերականգնելու մասին:

11. Կուսակցությունից վտարելու
կամ վտարվածին կուսակցության ան-
դամի իրավունքներում վերականգնե-
լու հարցի լուծման ժամանակ պետք
է ապահովված լինի առավելագույն
զգուշությունն ու ընկերական հոգա-
տարությունը և կուսակցության ան-
դամին ներկայացված մեղադրանքների
հիմնավորվածության ուշիւ-ուշով
քննումը:

Մանր դանցանքների համար (թողո-

վին չներկայանալը, անդամավճար-
ները ժամանակին չմուծելը և այլն)
պետք է կիրառվեն կուսակցական
դաստիարակության ու ներդործման՝
կանոնադրությամբ նախատեսված մի-
ջոցները, և վոչ թե կուսակցությու-
նից վտարելը, վորը կուսակցական
պատժի առավելագույն չափն է հան-
դիսանում:

12. Կուսակցությունից վտարված-
ների ապելյացիաները պետք է կու-
սակցական համապատասխան որդան-
ների կողմից քննության առնվեն վոչ
ուշ, քան յերկշաբաթյա ժամկետում՝
դրանք ստացվելու որվանից:

II

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ
ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԸ

13. Կուսակցության մեջ մտնել

ցանկացող բոլոր անձերն անցնում են
թեկնածուական ստաթ, վորն անհրա-
թեշտ և նրա համար, վորպեսդի թեկ-
նածուն ծանոթանա կուսակցության
ծրադրին, կանոնադրությանը, տակ-
տիկային և կուսկազմակերպության
համար ապահովվի թեկնածուի անձ-
նական հատկությունների ստուգումը:

14. Թեկնածու ընդունելու կարգը
(անհատական ընդունելություն, յե-
րաշխաւորություններ ներկայացնելն
ու դրանց ստուգումը, սկզբնական
կազմակերպության վորոշումը՝ ըն-
դունելության մասին և նրա հաստա-
տումը) միանգամայն նույնն է, ինչ
վոր կուսակցության անդամ ընդու-
նելիս:

15. Թեկնածուական ստաթը սահ-
մանվում է մեկ տարի ժամկետով:

16. Կուսակցության անդամության
թեկնածուները խորհրդակցական ձա-
յնի իրավունքով մասնակցում են այն
կազմակերպության ժողովներին, վո-
րին նրանք պատկանում են:

17. Կուսակցության անդամության
թեկնածուները մուծում են սովորա-
կան անդամավճար՝ տեղական կու-
սակցական կոմիտեյի դրամարկղը:

III

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ:
ՆԵՐԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԴԵՄՈԿՐԱՏԻԱ

18. Կուսակցության կազմակերպա-
կան կառուցվածքի ղեկավարող սկզբ-
բունքն է հանդիսանում ղեմոկրատա-
կան ցենտրալիզմը, վորը նշանա-
կում է.

ա) կուսակցության բոլոր ղեկավար

որդանները ընտրականութիւն՝ ներ-
քեցից մինչև վերև .

բ) կուսակցական որդանների պար-
բերական հաշվետվութիւն իրենց
կուսակցական կազմակերպութիւննե-
րի առջև .

գ) կուսակցական խիստ կարգա-
պահութիւն և փոքրամասնության
յենթարկվելը մեծամասնությանը .

դ) վերադաս որդանների վորոշում-
ների անպայման պարտադիր լինելը
ստորադաս որդանների համար :

19. Կուսակցութիւնը կառուցվում
է ըստ տերիտորիալ-արտադրական
հատկանիշի . վորևէ շրջան սպասար-
կող կուսակցական կազմակերպու-
թիւն վերադաս և համարվում ամբողջ
շրջանի մասերն սպասարկող բոլոր
կուսակցական կազմակերպութիւննե-

րի նկատմամբ , կամ աշխատանքի ամ-
բողջ ճյուղն սպասարկող կուսակցա-
կան կազմակերպութիւնը վերադաս և
համարվում աշխատանքի ամբողջ ճյու-
ղի մասերն սպասարկող բոլոր կու-
սակցական կազմակերպութիւնների
նկատմամբ :

20. Բոլոր կուսակցական կազմակեր-
պութիւններն ամբողջով և անհրաժեշտ
հարցերի լուծման մեջ , վորչափով այդ
վորոշումները չեն հակասում կու-
սակցության վորոշումներին :

21. Յուրաքանչյուր կուսակցական
կազմակերպության բարձրագույն դե-
կավար որդանն և հանդիսանում ընդ-
հանուր ժողովը (սկզբնական կազմա-
կերպութիւնների համար) , կոնֆե-
րենցիան (որինակ՝ շրջանային , մար-
զային կազմակերպութիւնների հա-

մար), համադումարը (Միութենական հանրապետությունների կոմկուսակցությունների համար, ՀամԿ(բ)Կ-ի համար) :

22. Ընդհանուր ժողովը, կոնֆերենցիան կամ համադումարն ընտրում են բյուրո կամ կոմիտե, վորոնք նրանց գործադիր որդաններն են հանդիսանում և ղեկավարում են կազմակերպության ամբողջ ընթացիկ աշխատանքը :

23. Կուսակցական որդանների ընտրությունների ժամանակ արգելվում է ցուցակով քվեարկությունը : Քվեարկությունը պետք է կատարվի ըստ առանձին թեկնածությունների, ըստվորում կուսակցության բոլոր անդամների համար ապահովվում է թեկնածուների բացարկման և վեր-

ջիններիս քննադատելու անսահմանափակ իրավունք : Ընտրությունները կատարվում են թեկնածուների փակ (ղաղտնի) քվեարկությամբ :

24. Բոլոր հանրապետական, յերկրային ու մարզային կենտրոններում, ինչպես նաև բոլոր շատ թեքիչ նշանակալից արդյունաբերական կենտրոններում, կուսակցության և կառավարության կարեւորագույն վորոշումները քննարկելու համար հրավիրվում են քաղաքային կուսակցական կազմակերպությունների ակտիվի ժողովներ, ըստվորում ակտիվի ժողովները պետք է գումարվեն վոչ թե սլարադի և այդ վորոշումներին ձևականորեն-հանդիսավոր կերպով հավանություն տալու համար, այլ դրանք իսկապես քննարկելու համար :

Մեծ կենտրոններում պետք է դու-
մարվեն վոչ միայն քաղաքային, այլև
ոսյոնական կուսակցական ակտիվի-
ժողովներ:

25. Առանձին կադմակերպություն-
ներում կամ ամբողջ կուսակցության
մեջ կուսակցական քաղաքականության
հարցերի ազատ և դործարար քննար-
կումը կուսակցության յուրաքանչյուր
անդամի անկապտելի իրավունքն է,
վորը բղխում է ներկուսակցական դե-
մոկրատիայից: Միայն ներկուսակցա-
կան դեմոկրատիայի հիման վրա կա-
րող է ծավալվել բոլշևիկյան ինքնա-
քննադատությունը և ամրապնդվել
կուսակցական կարգապահությունը,
վորը պետք է լինի գիտակցական, և
վոչ թե մեխանիկական: Բայց լայն
դիսկուսիան, մանավանդ համամիու-

թենական մաշտաբի դիսկուսիան
կուսակցական քաղաքականության
հարցերի շուրջը, պետք է կադմա-
կերպված լինի այնպես, վորպեսզի
այն չկարողանա հասցնել աննշան փոք-
րամասնության փորձերին՝ իր կամքը
փաթաթելու կուսակցության վիթխա-
րի մեծամասնության վզին, կամ
Ֆրակցիոն խմբավորումներ կազմելու
փորձերի, վորոնք ջլատում են կու-
սակցության միասնությունը, պա-
ռակտում առաջացնելու փորձերի,
վորոնք կարող են սասանել բանվոր
դասակարգի դիկտատուրայի ուժն ու
տոկունությունը: Ուստի համամիու-
թենական մաշտաբի լայն դիսկուսիան
կարող է անհրաժեշտ ճանաչվել միայն
այն դեպքում, յեթե՝ ա) այդ ան-
հրաժեշտությունն ընդունվում է

մարդային կամ հանրապետական մաս-
շտաբի առնվազն միջանի տեղական
կուսակազմակերպությունների կողմից.
բ) յեթե ՀամԿ(բ)Կ Կենտկոմի ներ-
սում բավականաչափ հաստատուն մե-
ծամասնություն չկա կուսակցական
քաղաքականության կարևորագույն
հարցերի շուրջը. գ) յեթե, չնայած
ՀամԿ(բ)Կ Կենտկոմում վորոշ տեսա-
կետի վրա կանգնած հաստատուն մե-
ծամասնության առկայությանը, այ-
նուամենայնիվ ՀամԿ(բ)Կ Կենտկոմն
անհրաժեշտ է համարում կուսակցու-
թյան մեջ դիսկուսիոն քննարկման
միջոցով ստուգել իր քաղաքականու-
թյան ճշտությունը: Այս պայմաննե-
րը կատարելու դեպքում միայն կա-
րելի յե ապահովել կուսակցությունը՝
հակակուսակցական տարրերի կողմից

ներկուսակցական դեմոկրատիան չա-
րաչահելուց, այս պայմանների առ-
կայության դեպքում միայն կարելի
յե վստահ լինել, վոր ներկուսակցա-
կան դեմոկրատիան ողուտ կրերի
գործին և չի ողտագործվի ի վնաս
կուսակցության ու բանվոր դասա-
կարգի:

26. Կուսակցության կազմակերպ-
ման սխեման.

ա) ամբողջ կուսակցության հա-
մար—Համամիութենական համագու-
մար, ՀամԿ(բ)Կ Կենտկոմ, Համամի-
ութենական կոնֆերենցիա.

բ) մարզի, յերկրամասի, Միութե-
նական հանրապետության համար—
մարդային, յերկրամասային կոնֆե-
րենցիաներ, Միութենական հանրա-
պետությունների կոմկուսակցություն-

մարզային կամ հանրապետական մաս-
շտաբի առնվազն մի քանի տեղական
կուսակազմակերպությունների կողմից.
բ) յեթե ՀամԿ(բ)Կ Կենտկոմի ներ-
սում բավականաչափ հաստատուն մե-
ծամասնություն չկա կուսակցական
քաղաքականության կարևորագույն
հարցերի շուրջը. գ) յեթե, չնայած
ՀամԿ(բ)Կ Կենտկոմում վորոշ տեսա-
կետի վրա կանգնած հաստատուն մե-
ծամասնության առկայությանը, այ-
նուամենայնիվ ՀամԿ(բ)Կ Կենտկոմն
անհրաժեշտ ե համարում կուսակցու-
թյան մեջ դիսկուսիոն քննարկման
միջոցով ստուգել իր քաղաքականու-
թյան ճշտությունը: Այս պայմաննե-
րը կատարելու դեպքում միայն կա-
րելի յե ապահովել կուսակցությունը՝
հակակուսակցական տարրերի կողմից

ներկուսակցական դեմոկրատիան չա-
րաչահելուց, այս պայմանների առ-
կայության դեպքում միայն կարելի
յե վստահ լինել, վոր ներկուսակցա-
կան դեմոկրատիան ողուտ կբերի
գործին և չի ողտագործվի ի վնաս
կուսակցության ու բանվոր դասա-
կարգի:

26. Կուսակցության կազմակերպ-
ման սխեման.

ա) ամբողջ կուսակցության հա-
մար—Համամիութենական համագու-
մար, ՀամԿ(բ)Կ Կենտկոմ, Համամի-
ութենական կոնֆերենցիա.

բ) մարզի, յերկրամասի, Միութե-
նական հանրապետության համար—
մարզային, յերկրամասային կոնֆե-
րենցիաներ, Միութենական հանրա-
պետությունների կոմկուսակցություն-

ների համագումարներ, մարզկոմներ, յերկրկոմներ, Միութենական հանրապետությունների կոմկուսակցությունների Կենտկոմներ.

դ) ոկրուզի համար—ոկրուզային կոնֆերենցիաներ, ոկրուզկոմներ.

դ) քաղաքի, շրջանի համար—քաղաքային, շրջանային կոնֆերենցիաներ, քաղաքային, շրջանային կոմիտեներ.

յե) ձեռնարկության, գյուղի, կուտնտեսության, ՄՏ կայանի, Կարմիր բանակի և Ռազմա-Մովային նավատորմի զորամասերի համար, հիմնարկների համար—սկզբնական կուսակցական կազմակերպությունների ընդհանուր ժողովներ, կոնֆերենցիաներ, սկզբնական կուսակցական կազմակերպությունների բյուրոներ:

27. Կուսակցական վերոչումների իրադործման ուղղությամբ պրակտիկ աշխատանք կատարելու համար Համ. Կ(բ) Կենտկոմում գոյություն ունեն հետևյալ վարչությունները և բաժինները—ա) Կադրերի վարչություն, բ) Պրոպագանդայի և ագիտացիայի վարչություն, դ) Կազմակերպական-հրահանգչական բաժին, դ) Գյուղատնտեսական բաժին, յե) Դպրոցների բաժին. ոկրուզկոմներում, մարզկոմներում, յերկրկոմներում և Միութենական հանրապետությունների կոմկուսակցությունների Կենտկոմներում—ա) Կադրերի բաժին, բ) Պրոպագանդայի և ագիտացիայի բաժին, դ) կազմակերպական-հրահանգչական բաժին, դ) Գյուղատնտեսական բաժին, յե) Ռազմական բաժին. կուսակ-

ցության քաղկոմներում և շրջկոմներում—ա) Կադրերի բաժին, բ) Պրոպագանդայի և ագիտացիայի բաժին, գ) Կազմակերպական-հրահանգչական բաժին, դ) Ռազմական բաժին:

Ռազմական բաժնի պարտականությունն է ողնություն ցույց տալ ռազմական որդաններին՝ զինապարտներին հաշվառման զրվածքի, զորակոչի կազմակերպման, պատերազմի դեպքում զորահավաքի գործում, հակառդային պաշտպանությունը կազմակերպելու գործում և այլն:

Պրոպագանդայի ու ագիտացիայի բաժինների և կադրերի բաժինների ղեկավարությունը մարզկոմներում, յերկրկոմներում և Միութենական հանրապետությունների կոմկուսակցությունների կենտկոմներում պետք

է զրված լինի հատուկ քարտուղարների վրա:

28. Կուսակցության յուրաքանչյուր կազմակերպություն վերջնականապես հաստատվելուց հետո իրավունք ունի ունենալու իր կնիքը, բայց վոչ այլ կերպ, քան համապատասխան վերադաս կուսակցական կազմակերպության սանկցիայով:

IV

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՑՆ ՈՐԳԱՆՆԵՐԸ

29. Համկ(բ)ի գերագույն որդան հանդիսանում է Համկ(բ)ի համագումարը: Հերթական համագումարները հրավիրվում են վոչ սակավ, քան յերեք տարին մեկ անգամ: Արտակարգ

համադումարներ հրավիրում ե Համ. Կ(բ)Կ Կենտրոնական Կոմիտեն՝ սեփական նախաձեռնությամբ կամ կուսակցության վերջին համադումարում ներկայացված անդամների ընդհանուր թվի առնվազն մեկ յերրորդի պահանջով: Կուսակցական համադումարի հրավիրումը և որակարգը հայտարարվում ե վոչ ուշ, քան համադումարից մեկ ու կես ամիս առաջ: Արտակարգ համադումարները հրավիրվում են յերկամսյա ժամկետում:

Համադումարը վավերական ե համարվում, յեթե նրանում ներկայացված ե վերջին հերթական համադումարում ներկայացված՝ կուսակցության բոլոր անդամների առնվազն կես մասը:

Կուսակցության համադումարում

ներկայացուցչության նորմաները սահմանվում են ՀամԿ(բ)Կ Կենտրոնական Կոմիտեյի կողմից:

30. Այն դեպքում, յերբ ՀամԿ(բ)Կ Կենտրոնական Կոմիտեն 29-րդ կետում մատնանշված ժամկետում չհրավիրի արտակարգ համադումար, արտակարգ համադումարի հրավիրումը պահանջող կազմակերպություններն իրավունք ունեն ստեղծելու կազմակերպական կոմիտե, վորն արտակարգ համադումարի հրավիրման հարցում ողտվում ե ՀամԿ(բ)Կ Կենտրոնական Կոմիտեյի իրավունքներով:

31. Համադումարը.

ա) Լսում և հաստատում ե Համ. Կ(բ)Կ Կենտրոնական Կոմիտեյի, Կենտրոնական վերստուղիչ հանձնաժողովի և կենտրոնական այլ կազմակեր-

սլուծյունների հաշվետվությունները .
բ) վերանայում և փոփոխում ե կու-
սակցության ծրագիրն ու կանոնա-
դրությունը .

դ) վորոչում ե կուսակցության
տակտիկական դիժն ընթացիկ քաղա-
քականության հիմնական հարցերի
վերաբերյալ .

դ) ընտրում ե Համկ(բ)կ Կենտրո-
նական Կոմիտե և Կենտրոնական վեր-
ստուգիչ հանձնաժողով :

32. Համկ(բ)կ Կենտրոնական Կոմի-
տեն և Կենտրոնական վերստուգիչ
հանձնաժողովն ընտրվում են համա-
գումարի կողմից սահմանվող կազ-
մով : Համկ(բ)կ Կենտրոնական Կոմի-
տեյի անդամների հեռանալու դեպքում
նրա կազմը լրացվում ե համադումա-

րի կողմից ընտրված թեկնածուների
թվից :

33. Համկ(բ)կ Կենտրոնական Կոմի-
տեն չորս ամսվա ընթացքում ունենում
ե առնվազն մեկ սլենար նիստ : Համ-
կ(բ)կ Կենտկոմի անդամության թեկ-
նածուները Համկ(բ)կ Կենտկոմի սլե-
նումների նիստերին ներկա յեն լինում
խորհրդակցական ձայնի իրավունքով :

34. Համկ(բ)կ Կենտրոնական Կոմի-
տեն կազմակերպում ե՝ քաղաքական
աշխատանքի համար—Քաղաքական
բյուրո , կազմակերպական աշխա-
տանքի ընդհանուր ղեկավարման հա-
մար—Կազմակերպական բյուրո , կազ-
մակերպական-գործադիր բնույթի
ընթացիկ աշխատանքի համար—Քաղ-
տուղարություն , կուսակցության և
Համկ(բ)կ Կենտկոմի վորոչումներ

պությունների հաշվետվությունները.
բ) վերանայում և փոփոխում և կուսակցութեան ծրագիրն ու կանոնադրությունը.

դ) վորոշում և կուսակցութեան տակտիկական դիժն ընթացիկ քաղաքականութեան հիմնական հարցերի վերաբերյալ.

դ) ընտրում և ՀամԿ(բ)Կ կենտրոնական կոմիտե և կենտրոնական վերստուգիչ հանձնաժողով:

32. ՀամԿ(բ)Կ կենտրոնական կոմիտեն և կենտրոնական վերստուգիչ հանձնաժողովն ընտրվում են համագումարի կողմից սահմանվող կազմով: ՀամԿ(բ)Կ կենտրոնական կոմիտեյի անդամների հեռանալու դեպքում նրա կազմը լրացվում և համագումար-

րի կողմից ընտրված թեկնածուների թվից:

33. ՀամԿ(բ)Կ կենտրոնական կոմիտեն չորս ամսվա ընթացքում ունենում և առնվազն մեկ սլենար նիստ: ՀամԿ(բ)Կ կենտկոմի անդամութեան թեկնածուները ՀամԿ(բ)Կ կենտկոմի սլենումներին նիստերին ներկա յեն լինում խորհրդակցական ձայնի իրավունքով:

34. ՀամԿ(բ)Կ կենտրոնական կոմիտեն կազմակերպում և՛ քաղաքական աշխատանքի համար—Քաղաքական բյուրո, կազմակերպական աշխատանքի ընդհանուր ղեկավարման համար—Կազմակերպական բյուրո, կազմակերպական—գործադիր բնույթի ընթացիկ աշխատանքի համար—Քարտուղարություն, կուսակցութեան և ՀամԿ(բ)Կ կենտկոմի վորոշումների

կատարումն ստուգելու համար—Կուսակցական Վերահսկողության Հանձնաժողով:

35. Կուսակցական Վերահսկողության Հանձնաժողովը՝

ա) վերահսկում է կուսակցության և ՀամԿ(բ)Կ Կենտկոմի վորոշումների կատարումը կուսակցական կադմակերպությունների և խորհրդային-տնտեսական որդանների կողմից.

բ) ստուգում է տեղական կուսակցական կադմակերպությունների աշխատանքը.

գ) սլատասխանատվության Ե յենթարկում ՀամԿ(բ)Կ ծրագրի, կանոնադրության, կուսակցական կարգապահության խախտման մեջ մեղավորներին:

36. ՀամԿ(բ)Կ Կենտրոնական Կոմի-

տեն համագումարների միջև ընկած ժամանակամիջոցում ղեկավարում է կուսակցության ամբողջ աշխատանքը, ներկայացնում է կուսակցությունը՝ այլ կուսակցությունների, կադմակերպությունների և հիմնարկների հետ ունեցած հարաբերությունների մեջ, կադմակերպում է կուսակցության ղանադան հիմնարկներ և ղեկավարում է նրանց գործունեյությունը, նշանակում է կենտրոնական որդանների խմբադրություններ, վորոնք աշխատում են նրա վերահսկողությամբ, և հաստատում է տեղական խոշոր կադմակերպությունների կուսակցական որդանների խմբադրությունները, կադմակերպում և ղեկավարում է համարակական նշանակություն ունեցող ձեռնարկությունները, բաշխում է

կուսակցութեան ուժերն ու միջոցները, վարում ե կենտրոնական դրամարկը:

Համկ(բ)Կ Կենտրոնական Կոմիտեն ուղղութեան ե տալիս կենտրոնական խորհրդային և հասարակական կազմակերպութեաններ ղ աշխատանքին՝ նրանցում յեղած կուսակցական խմբերի միջոցով:

37. Կուսակցական համապատասխանութի միջև ընկած ժամանակամիջոցում Համկ(բ)Կ Կենտրոնական Կոմիտեն, վոչ սակայն քան տարին մեկ անգամ, հրավիրում ե համամիութենական կուսակցական կոնֆերենցիա՝ տեղական կուսակցական կազմակերպութեաններին ներկայացուցիչներին՝ կուսակցութեան քաղաքականութեան հասունացած հարցերը քննարկելու համար:

Համամիութենական կոնֆերենցիայի պատգամավորներն ընտրվում են մարզկոմների, յերկրկոմների, Միութենական հանրապետութեաններ կոմկուսակցութեաններին Կենտկոմներին պլենումներում:

Համամիութենական կոնֆերենցիայի պատգամավորներին ընտրութեան կարգը ե ներկայացուցչութեան նորմաները սահմանվում են Համկ(բ)Կ Կենտկոմի կողմից:

Համկ(բ)Կ Կենտկոմի անդամները, յեթե նրանք պատգամավորներ չեն ըստ տեղական կազմակերպութեանների լիազորութեան, Համամիութենական կոնֆերենցիայի աշխատանքին մասնակցում են խորհրդակցական հայնի իրավունքով:

38. Համամիութենական կոնֆերեն-

ցիւային իրավունք ե վերապահվում
փոխելու ՀամԿ(բ)Կ Կենտկոմի ան-
դամների մի մասին, այսինքն՝ իրա-
վունք ՀամԿ(բ)Կ Կենտկոմի կազմից
հանելու ՀամԿ(բ)Կ Կենտկոմի այն
առանձին անդամներին, վորոնք չեն
ապահովում իրենց՝ վորպես ՀամԿ(բ)Կ
Կենտկոմի անդամներին՝ սլարտակա-
նությունների կատարումը, և նրանց
փոխարինել ուրիշներով, բայց կու-
սակցության համադումարի կողմից
ընտրված ՀամԿ(բ)Կ Կենտկոմի կազ-
մի մեկ հինգերորդից վոչ ավելի քա-
նակությամբ:

Համամիութենական կոնֆերենցիան
ՀամԿ(բ)Կ Կենտկոմի անդամների
կազմը լրացնում ե կուսակցության
համադումարի կողմից ընտրված թեկ-
նածուների թվից և վերջիններիս փո-

խարեն ընտրում ե ՀամԿ(բ)Կ Կենտ-
կոմի անդամության՝ համապատաս-
խան թվով նոր թեկնածուներ:

39. Համամիութենական կոնֆերեն-
ցիայի վորոշումները հաստատվում են
ՀամԿ(բ)Կ Կենտկոմի կողմից, բացա-
ռությամբ ՀամԿ(բ)Կ Կենտկոմի ան-
դամների փոխարինման և ՀամԿ(բ)Կ
Կենտկոմի անդամության նոր թեկնա-
ծուների ընտրության վերաբերյալ
վորոշումից, վորը ՀամԿ(բ)Կ Կենտ-
կոմի հաստատման կարիքը չի զգում:

Համամիութենական կոնֆերենցիայի
այն վորոշումները, վոր հաստատված
են ՀամԿ(բ)Կ Կենտկոմի կողմից,
սլարտադիր են կուսակցական բոլոր
կազմակերպությունների համար:

40. Բուլղերիկյան ղեկավարությունն
ու քաղաքական աշխատանքն ուժե-

ցիային իրավունք և վերապահվում
փոխելու ՀամԿ(բ)Կ Կենտկոմի ան-
դամների մի մասին, այսինքն՝ իրա-
վունք ՀամԿ(բ)Կ Կենտկոմի կազմից
հանելու ՀամԿ(բ)Կ Կենտկոմի այն
առանձին անդամներին, վորոնք չեն
ապահովում իրենց՝ վորպես ՀամԿ(բ)Կ
Կենտկոմի անդամների՝ պարտակա-
նությունների կատարումը, և նրանց
փոխարինել ուրիշներով, բայց կու-
սակցության համադումարի կողմից
ընտրված ՀամԿ(բ)Կ Կենտկոմի կազ-
մի մեկ հինգերորդից վոչ ավելի քա-
նակությամբ:

Համամիութենական կոնֆերենցիան
ՀամԿ(բ)Կ Կենտկոմի անդամների
կազմը լրացնում և կուսակցության
համադումարի կողմից ընտրված թեկ-
նածուների թվից և վերջիններին փո-

խարեն ընտրում և ՀամԿ(բ)Կ Կենտ-
կոմի անդամության՝ համապատաս-
խան թվով նոր թեկնածուներ:

39. Համամիութենական կոնֆերեն-
ցիայի վորոշումները հաստատվում են
ՀամԿ(բ)Կ Կենտկոմի կողմից, բացա-
ռությամբ ՀամԿ(բ)Կ Կենտկոմի ան-
դամների փոխարինման և ՀամԿ(բ)Կ
Կենտկոմի անդամության նոր թեկնա-
ծուների ընտրության վերաբերյալ
վորոշումից, վորը ՀամԿ(բ)Կ Կենտ-
կոմի հաստատման կարիքը չի զգում:

Համամիութենական կոնֆերենցիայի
այն վորոշումները, վոր հաստատված
են ՀամԿ(բ)Կ Կենտկոմի կողմից,
պարտադիր են կուսակցական բոլոր
կազմակերպությունների համար:

40. Բոլշևիկյան ղեկավարությունն
ու քաղաքական աշխատանքն ուժե-

ղացնելու նպատակով ՀամԿ(բ)Կ Կենտրոնական Կոմիտեն իրավունք ունի ստեղծել քաղաքական բաժիններ և առանձնացնել ՀամԿ(բ)Կ Կենտկոմի կուսակցական կազմակերպիչներ՝ սոցիալիստական շինարարության հետ մնացող այն բնագավառներում, վորոնք առանձնապես կարևոր նշանակութիւն են ստանում ժողովրդական տնտեսության ու ամբողջ յերկրի համար, ինչպես նաև, յերբ քաղաքական բաժինները կատարել են իրենց հարվածային խնդիրները, — դրանք վերածել արտադրական-տերիտորիալ հատկանիշով կառուցված սովորական կուսակցական որգաններին:

Քաղբաժիններն աշխատում են ՀամԿ(բ)Կ Կենտկոմի կողմից հաստատվող հատուկ հրահանգների հիման վրա:

41. ՀամԿ(բ)Կ Կենտրոնական Կոմիտեն կուսակցական կազմակերպութիւններին պարբերաբար ինֆորմացիա յետալիս իր աշխատանքի մասին:

42. Կենտրոնական վերստուգիչ հանձնաժողովը վերստուգում է. ա) գործերի ընթացքի արագութիւնն ու ճշտութիւնը կուսակցության կենտրոնական որգաններում և ՀամԿ(բ)Կ Կենտկոմի Քարտուղարության ապարատի կանոնաւորութիւնը. բ) ՀամԿ(բ)Կ Կենտկոմի դրամարկղը և ձեռնարկութիւնները:

Վ

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԱՅԻՆ, ՅԵՐԿՐԱՄԱՍՍՅԻՆ ՅԵՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ
 ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

43. Մարզային, յերկրամասային, հանրապետական կուսակցական կազ-

մակերպության բարձրագույն որդանն
է հանդիսանում մարդային, յերկրա-
մասային կուսակցական կոնֆերեն-
ցիան կամ Միութենական հանրապե-
տության կոմկուսակցության համա-
դումարը, իսկ դրանց միջև ընկած
ժամանակամիջոցում՝ մարդային կո-
միտեն, յերկրամասային կոմիտեն,
Միութենական հանրապետության
կոմկուսակցության Կենտկոմը: Իրենց
գործունեյության մեջ նրանք ղեկա-
վարվում են Համամիութենական Կո-
մունիստական (բոլշևիկների) կուսակ-
ցության և նրա ղեկավար որդանների
վորոշումներով:

44. Հերթական մարդային, յերկրա-
մասային կոնֆերենցիան կամ Միու-
թենական հանրապետության կոմկու-
սակցության համագումարը հրավիր-

վում և մարդային, յերկրամասային
կոմիտեյի, Միութենական հանրապե-
տության կոմկուսակցության Կենտ-
կոմի կողմից՝ մեկուկես տարին մեկ
անգամ, իսկ արտակարգ կոնֆերեն-
ցիան կամ համագումարը հրավիրվում
է մարդային կոմիտեյի, յերկրամա-
սային կոմիտեյի, Միութենական հան-
րապետության կոմկուսակցության
Կենտկոմի վորոշմամբ կամ մարդա-
յին, յերկրամասային, հանրապետա-
կան կուսկազմակերպության մեջ
մտնող կազմակերպությունների ան-
դամների ընդհանուր թվի մեկ յեր-
րորդի պահանջով:

Մարդային, յերկրամասային կոնֆե-
րենցիայի, Միութենական հանրապե-
տության կոմկուսակցության համա-
դումարի ներկայացուցչության նոր-

մաները սահմանվում են մարդային
կոմիտեյի, յերկրամասային կոմիտե-
յի, Միութենական հանրապետության
կոմկուսակցության Կենտկոմի կող-
մից :

Մարդային, յերկրամասային կոն-
ֆերենցիան, Միութենական հանրա-
պետության կոմկուսակցության հա-
մադումարը լսում և հաստատում է
մարդային, յերկրամասային կոմի-
տեյի, Միութենական հանրապետու-
թյան կոմկուսակցության Կենտկոմի,
վերստուգիչ հանձնաժողովի և մար-
դային, յերկրամասային, հանրապե-
տական այլ կազմակերպությունների
հաշվետու զեկուցումները, քննարկում
